

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 39/5

ք.Երևան

6 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկի դաշտում աշխատելու վերաբերյալ Ա/Ձ Մասումեի Նաբաթի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Մասումեի Նաբաթին հայտնում է, որ ս/թ փետրվար ամսին, երբ ցանկացել է հանձնել Մասումեի Նաբաթի տարեկան եկամուտների և շրջանառության հարկի հայտարարությունները, պետք էր մուտքագրել տվյալ անձի ՀԾՀ-ն: Նա դիմել է Դեղատան 3 հասցեյում գտնվող հարկային տեսչություն: ՀԾՀ-ն ներկայացնելուց հետո ասել են, որ տվյալները մուտքագրված են և որ տվյալ անձը էրեբունու ՀՏ-ում ունի մեկ այլ կազմակերպություն: Հնարավոր չհամարելով Ա/Ձ Մասումեի Նաբաթին այցելել է էրեբունու ՀՏ, որտեղ պատասխանել են, որ իրոք Մասումեի Նաբաթին ունի գրանցված Ա/Ձ ՀՎՀՀ 23211081, որն ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու դիմում և նա չի կարող ունենալ երկու Ա/Ձ որոնք աշխատեն շրջանառության հարկով: Իրականում 23211081 ՀՎՀՀ-ով գրանցված Նաբաթին ոչ թե Մասումեին է, այլ Ֆարշիդը, ով Մասումեի հայրն է և հարկայինում ավելի վաղ էր գրանցված քան աղջիկը: Բայց էրեբունու ՀՏ-ում Ֆարշիդի տվյալներն ընդհանրապես չկային: Ա/Ձ Մասումեի Նաբաթին խորհուրդ են տվել գնալ ոստիկանության անձնագրային բաժին, քանի որ ոչ մի կերպ հնարավոր չէր մուտքագրել Մասումեի ՀԾՀ-ի: Ա/Ձ Մասումեի Նաբաթին այցելել է անձնագրային բաժին: Այնտեղ իրեն հայտնել են, որ իրենց հետ որևէ խնդիր առկա չէ և ետ են ուղարկել ՀՏ: Ֆարշիդն ընդհանրապես՝ որպես հարկատու գոյություն չունի: Ա/Ձ Մասումեի Նաբաթին այցելել է ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստր, որտեղ հայտնել են, որ պետք է վճարի պետական տուրք և թարմացնի Ֆարշիդի տվյալները, սակայն տվյալների փոփոխություններն էլ ոչ մի արդյունք չեն տվել: Վերջապես Կենտրոնի սպասարկման բաժնի աշխատակիցը խորհուրդ է տվել զանգահարել թեժ գիծ: Արդեն վերջանում էր նաև տարեկան եկամուտների հաշվարկի վերջնաժամկետը: 13.04.2018թ. զանգահարել են ի պատասխան թեժ գծի, թե կարող է հանձնել հաշվետվությունը և, որ ամեն ինչ կարգավորված է: Ա/Ձ Մասումեի Նաբաթին գրավոր դիմել է նաև ՀՎՍՎ թիվ 3 բաժին: Սակայն այդ զանգը ևս չէր համապատասխանում իրականությանը: Վերջապես 21.04.2018թ. երեկոյան այս հարցը կարգավորվել է և ուշացումով հանձնվել է հաշվետվությունը: Ա/Ձ Մասումեի Նաբաթին սպասում էր

գրությանը, որպեսզի գրավոր պատասխաներ շրջանառության հարկի հայտարարագիր չներկայացնելու պատճառները:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Մասումեի Նաբաթին խնդրում է թույլ տալ աշխատել շրջանառության հարկի դաշտում:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ա/Ձ Մասումեի Նաբաթին ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում է ստացել 17.10.2016թ.:

Ա/Ձ Մասումեի Նաբաթին փորձել է սահմանված ժամկետում ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, սակայն այն փաստացի ներկայացնել իրեն չի հաջողվել: Մասնավորապես, հարկ վճարողների հաշվառման համակարգում Ա/Ձ Մասումեի Նաբաթին հաշվառված է եղել իր հոր՝ Ա/Ձ Ֆարշիդ Նաբաթիի տվյալների ներքո:

Վերը նշված խնդիրները լուծում են ստացել միայն 21.04.2018թ.:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն դրամը:

Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 455-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 59-րդ և 254-րդ հոդվածներով սահմանված՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը, ինչպես նաև Օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ 2018 թվականի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության ԱԱՀ-ի շեմը սահմանվում է 115 միլիոն դրամ:

Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված են այն պայմանները, որոնց դեպքում տնտեսվարող սուբյեկտը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

Քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն Ա/Ձ Մասումեհ Նաբաթին բավարարում է Օրենսգրքով նախատեսված բոլոր պահանջներին 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Մասումեհ Նաբաթին սահմանված ժամկետում փորձել է ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, սակայն հարկ վճարողների հաշվառման համակարգում տեղ գտած խնդիրների հետևանքով (ինչի մասին բողոքաբերը բազմիցս բարձրաձայնել է) իրեն փաստացի չի հաջողվել էլեկտրոնային եղանակով ներկայացնել այն, Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել Ա/Ձ Մասումեհ Նաբաթին ներկայացնել հայտարարություն՝ 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ա/Ձ Մասումեհ Նաբաթիի դիմում-բողոքը բավարարել:
2. Ա/Ձ Մասումեհ Նաբաթիի կողմից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում 2018թ. համարել շրջանառության հարկ վճարող:

Հանձնաժողովի նախագահ



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ